

## **Հայ - Բելառուսական միջկառավարական հանձնաժողով**

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2000թ. հունվարի 18-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի:

Համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը կայացել է 2000թ. հունվարի 18-20-ին՝ Մինսկում: Վերջին՝ 8-րդ նիստը տեղի է ունեցել 2010թ. սեպտեմբերի 28-ին՝ Երևանում: Նիստի շրջանակներում քննարկվել են երկկողմ համագործակցության ընդլայնմանն առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես՝ Հայաստանի և Բելառուսի միջև առևտրաշրջանառության ծավալների մեծացման, տնտեսական համագործակցության զարգացման, առողջապահության, գյուղատնտեսության, գիտության և կրթության, մշակույթի, տեղեկատվական տեխնոլոգիաների, ոսկերչության և այլ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում երկկողմ համագործակցության ընդլայնման, Հայաստանի և Բելառուսի միջև միջմարզային կապերի խորացման վերաբերյալ և այլն:

Ստորագրվել է Հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի ութերորդ համատեղ նիստի Արձանագրությունը:

***Հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի համանախագահներն են.***

**ՀՀ** **Էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը՝** հայկական կողմից,

**ԲՀ** **Էկոնոմիկայի նախարար Նիկոլայ Սնոպկովը՝** բելառուսական կողմից: